

ՆԱՐԻՆԵ ԿԱՐԱԿՈՒԼԱԿՑԱՆ

«Հ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի ասպիրանտ,
«Հ բնապահպանության նախարարության
արտաքին կապերի բաժնի
գլխավոր մասնագետ»

«Հ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՈԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԿՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ոազմավարական պլանավորման արդյունավետությունը և դրա մակարդակի բարձրացման ուղիները պայմանավորված են արտաքին առևտրի կառուցվածքում արտահանման գործարքների վերլուծությամբ: Այդ առումով, սույն հոդվածում ներկայացվել են տարբեր մոդելներ և մոտեցումներ, որոնց հիմքում տնտեսության արտահանման ծավալների ընդլայնումն է, որի արդյունքում անհրաժեշտ է բացահայտել «Հ տնտեսության զարգացման ներկա փուլի գերակա ոլորտները, ինչպես նաև «բացահայտված համեմատական առավելությունները»՝ կիրառելով ռազմավարական պլանավորման ժամանակակից գործիքակազմ:

Հիմնաբառեր. արտահանում, ներմուծում, արտաքին տնտեսական հարաբերություններ, արտաքին առևտրաշրջանառություն, առևտրային պակասուրդ, ռազմավարական պլանավորում, տնտեսական մեխանիզմներ, տնտեսական միասնացում, ազատ առևտրային քաղաքականություն, նորդասական տնտեսագետներ, տեղեկատվական համակարգեր, խորհրդատվական ծառայություններ

Արտահանվող և ներմուծվող բոլոր ապրանքատեսակների քանակական ու արժեքային ցուցանիշների հիման վրա բացահայտվում է երկրի նյութական ռեսուրսների աճի ու նվազման, ինչպես նաև արտաքին առևտրի օբյեկտիվ ու հավաստի պատկերը:

Արտաքին տնտեսական հարաբերությունների կարգավորման ու մրցունակ ապրանքատեսակների արտահանման խոչընդոտների դեմ տարվող պայքարի ակտիվացման գործընթացի կատարելագործմանն է ծառայում «Հ


արտաքին առևտրի իրավիճակի վերաբերյալ տեղեկատվությունը: Օրինակ՝ 2012 թ. ՀՀ արտահանման գերակշիռ մասը բաժին է ընկել եվրոպական, իսկ ներմուծմանը՝ ասիական երկրներին, թեև թե՛ ԱՊՀ, թե՛ եվրոպական երկրներին բաժին ընկնող ներմուծման ծավալները գրեթե հավասար են այդ ցուցանիշին (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ արտաքին առևտուրն ըստ երկրների խմբերի, հազ. ԱՄՆ դոլար¹

Երկրների խմբեր	Արտահանում		Ներմուծում	
	2012	2013	2012	2013
ԱՊՀ	327.070	396.539	1.350.727	1.394.187
Եվրոպա	507.573	496.940	1.129.160	1.161.925
Ասիա	261.553	363.124	1.369.460	1.359.237
Ամերիկա	190.337	187.833	297.673	292.277
Այլ երկրներ	74.851	34.300	137.906	281.125
Ընդամենը	1.361.384	1.478.736	4.284.926	4.488.751


2013 թ. ՀՀ արտաքին առևտրաշրջանառության հիմնական գործընկերներն են եղել Ռուսաստանը, Չինաստանը, Չեռնոսիան, Իրանը, Թուրքիան, Ուկրաինան, Բուլղարիան: Արտահանման ամենամեծ ծավալը բաժին է ընկել Ռուսաստանին՝ կազմելով ամբողջ արտահանման 23%-ը: Այս ցուցանիշով Ռուսաստանին մոտ է Բուլղարիան՝ 10.5% (գծապատկեր 1):



1- Ռուսաստան, 2- Չինաստան, 3- Չեռնոսիա, 4- Բուլղարիա, 5- Իրան, 6- Ուկրաինա, 7- Թուրքիա, 8- ԱՄՆ, 9- Բելգիա, 10- Իտալիա, 11- Նիդեռլանդներ, 12- Վրաստան, 13- Շվեյցարիա, 14- Ռումինիա, 15- Ֆրանսիա, 16- Ճապոնիա, 17- Կորեայի Հանրապետություն, 18- Ավստրիա, 19- Հնդկաստան, 20- Բրազիլիա, 21- մնացած երկրներ

Գծապատկեր 1. 2013 թ. ՀՀ արտահանման ծավալում գործընկեր երկրների տեսակարար կշիռը²

¹ Տե՛ս ՀՀ ԱՎԾ, Արտաքին տնտեսական գործունեություն, Հայաստանը թվերով, 2013, էջ 87:
² Տե՛ս նույն տեղը, էջ 88:



1-Ռուսաստան, 2-Չինաստան, 3-Չեռնանիա, 4-Բուլղարիա, 5-Իրան, 6-Ուկրաինա, 7-Թուրքիա, 8-ԱՄՆ, 9-Բելգիա, 10-Իտալիա, 11-Նիդեռլանդներ, 12-Վրաստան, 13-Շվեյցարիա, 14-Ռումինիա, 15-Ֆրանսիա, 16-Ճապոնիա, 17-Կորեայի Հանրապետություն, 18-Ավստրիա, 19-Հնդկաստան, 20-Բրազիլիա, 21-մնացած երկրներ

Պատկեր 2. 2013 թ. ՀՀ ներմուծման ծավալում գործընկեր երկրների տեսակարար կշիռը³

2007-2013 թթ. ՀՀ արտաքին առևտրաշրջանառության հիմնական ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրաշրջանառությունը, մլն ԱՄՆ դոլար⁴

Ցուցանիշը	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Ներմուծում	3.267	4.426	3.321	3.748	4.145	4.261	4.476
Ներմուծում/արտաքին առևտրաշրջանառություն(%)	74	81	82	78	76	76	75
Արտահանում	1.152	1.057	0.710	1.041	1.334	1.380	1.480
Արտահանում/արտաքին առևտրաշրջանառություն(%)	26	19	18	22	24	24	25
Արտաքին առևտրաշրջանառություն	4.419	5.483	4.031	4.789	5.479	5.641	5.956

2008-2010 թթ. հանրապետության առևտրային պակասուրդը աճի միտում է դրսևորել: Այսպես՝ 2004–2010 թթ. վերջինիս տեսակարար կշիռը արտաքին առևտրաշրջանառության մեջ գրեթե կրկնապատկվել է՝ 30%-ից հասնելով 58%-ի: Կարծում ենք՝ ռազմավարական պլանավորման տեսանկյունից, այս միտումը լուրջ վտանգներ է պարունակում, որոնց վերացումն առավել արդիական է դարձել ժամանակակից ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ կապված: Ընդ որում, առևտրային պակասուրդի ծածկման հիմնական աղբյուրները՝ աշխատուժի արտահանում, միջազգային տրանսֆերտներ, բավական ռիսկային են: Նման պայմաններում ավելի է կարևորվում երկրի՝ որպես ազատ տնտեսական գոտու խթանումը:

³ Տե՛ս ՀՀ ԱԿԾ, Արտաքին տնտեսական գործունեություն, Հայաստանը թվերով, 2013, էջ 89-90:
⁴ Տե՛ս http://armstat.am/file/article/armenia_13_2.pdf

Բացի այդ, ըստ ռազմավարական պլանավորման տնտեսական մեխանիզմների ներդրման, թվում է, տնտեսական միասնացման գործընթացից առավելագույն օգուտ քաղելու և երկրի տնտեսական զարգացման հեռանկարներ ապահովելու համար հարկ է մշակել հիմնարար առևտրային քաղաքականություն, որը պետք է միտված լինի ներքին շուկայի պաշտպանությանը, արտաքին առևտրի խթանմանը, առևտրի ոլորտում կառուցվածքային բարեփոխումների իրականացմանը: Ավելին, մենք համաձայն ենք հայ տնտեսագետների այն դիրքորոշմանը, ըստ որի պետությունը չպետք է իր հույսը դնի օտար երկրներից սպասվող մասնավոր տրանսֆերտների վրա: Ընդհակառակը, պետք է զարգացնել հատկապես այն ճյուղերը, որոնք մրցունակ են միջազգային շուկայում և հնարավորություն կտան ապահովելու մեր երկրի ելքը դեպի արտաքին շուկաներ⁵: Ինչևէ, ՀՀ տնտեսության զարգացումը սահմանափակ ներքին շուկայի պայմաններում մեծապես կախված է արտահանման ծավալների առաջանցիկ աճից: Հայաստանի Հանրապետությունում բարենպաստ գործարարության միջավայր ձևավորելու, առաջանցիկ տեմպեր ապահովելու նպատակով արտահանման ուղղակի խրախուսման քաղաքականության վարումը նոր ուղիներ կբացահայտի ՀՀ տնտեսության համար՝ նպատակադրելով ներթափանցել զարգացած երկրների շուկաներ⁶:

Հայաստանի տնտեսության զարգացման քննարկումների կենտրոնում սովորաբար աշխարհագրական մեկուսացվածության խնդիրն է: Դա մի կողմից՝ բնական է երկրի լեռնային տեղադրվածության և ծովային ելք չունենալու պատճառով, մյուս կողմից՝ բացատրվում է արհեստական տնտեսական շրջափակմամբ: Շրջափակման ազդեցությունը ՀՀ արտաքին առևտրի վրա փորձել են հաշվարկել Լ. Ֆրենկմանը, Եվ. Պոլյակովը և Կ. Ուենկոն⁷: Հիմնվելով ստանդարտ վիճակագրական մոդելների վրա՝ նրանք գնահատել են արտահանման ծավալների կամ արտաքին առևտրի ծավալների նվազման հետևանքով առաջացած կորուստները կամ վնասները: Հեղինակները ՀՀ արտաքին առևտուրն այլ երկրների արտաքին առևտրի հետ համեմատելու համար օգտագործել են երկու հայտնի՝ տնտեսության բացվածության և գրավիտացիայի առևտրային մոդելները: Նրանք գնահատել են առևտրի ծավալների և եկամուտների մակարդակը՝ հիմք ընդունելով երկրի տարածքի և աշխարհագրական առանձնահատկությունների միջև գոյություն ունեցող առնչությունները:

Այսպես՝ տնտեսության բացվածության վերլուծության (առևտրային միասնացման) տեսական հիմքը հետևյալն է. առավել հարուստ երկրների արտաքին առևտրի ծավալներն ավելի մեծ են (ՀՆԱ-ի նկատմամբ՝ տոկոսներով), իսկ ցածր եկամուտ ունեցող և խոշոր երկրների արտաքին առևտրի ծավալները՝ փոքր: Տնտեսության բացվածությունը բնութագրող փոփոխականը՝ արտահայտված ՀՆԱ-ի նկատմամբ արտաքին առևտրի մեծությամբ, համեմատության մեջ է դրվել մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի և երկրի բնակչության թվի հետ: Հիմնական եզրակացությունը հետևյալն է. Հայաստանի արտաքին առևտուրն ու արտահանումն ավելի դանդաղ են զարգանում թե՛ ԱՊՀ

⁵ Տե՛ս www.banker.am

⁶ Տե՛ս Մ. Մելքոնյան, Վ. Հակոբյան, Ձեռնարկատիրական գործունեության առանձնահատկությունները ՀՀ-ում, «Հայաստան. ֆինանսներ և էկոնոմիկա», N 8-9, 2008, էջ 33:

⁷ Տե՛ս Լ. Ֆրենկման, Եվ. Պոլյակով, Կ. Ուենկո, Շրջափակման ծախսերը Հայաստանի արտաքին առևտրի ոլորտում: «Տնտեսական քաղաքականություն և աղբատություն», N 8, 2004, էջ 8-12, <http://www.edrc.am>:

երկրների, թե՛ ընդհանուր ցածր եկամուտներ ունեցող մյուս երկրների համեմատությամբ, որի հիմնական և ընդունելի պատճառաբանությունը շրջափակումն է: Վերլուծության արդյունքներն օգտագործվել են շրջափակման հետևանքով տնտեսության կրած վնասների մեծությունը հաշվարկելու համար: Որպես վնասի գնահատական է ընդունվել փաստացի և ռեգրեսիոն վերլուծության միջոցով ստացվող հնարավոր առևտրի ծավալների տարբերությունը: 2002 թ. տարեկան վնասը գնահատվել է 1100–1200 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ մոտ կեսը: Արտահանման առումով, շրջափակման հետևանքով վնասի գնահատականը կազմել է մոտ 700 մլն ԱՄՆ դոլար: Սակայն ստացված արդյունքից երևում է, որ շրջափակման հետևանքով կրած վնասը տարեցտարի կայուն նվազման միտում է դրսևորել, քանի որ ժամանակի ընթացքում մասնավոր հատվածը շրջափակումը շրջանցելու նպատակով տարբեր ձանապարհներ է գտնում⁸:

Շրջափակման հետևանքով կրած վնասները գնահատելու նպատակով հեղինակներն օգտագործել են նաև Ֆրենկելի կողմից 1997 թ. մշակված գրավիտացիոն մոդելը, որը բնութագրում է երկկողմանի ամբողջական առևտուրը: Ըստ մոդելի՝ հաշվարկվել է 1999–2002 թթ. արտաքին առևտրաշրջանառության գործակիցը՝ որպես փաստացի առևտրաշրջանառության և գրավիտացիոն մոդելի միջոցով գնահատված հնարավոր առևտրի ծավալների հարաբերություն: Դա տատանվում է 1.0–1.1 սահմաններում՝ հերքելով հնարավոր առևտրի ծավալներից զգալիորեն ցածր փաստացի առևտրի ծավալների վարկածը: Այսպիսով՝ գործակիցը վերաբերում է ընդհանուր առևտրաշրջանառությանը, ուստի արտահանումը կարող է էականորեն զիջել ենթադրվող մակարդակը: Գրավիտացիոն մոդելի միջոցով ստացված գնահատականը կազմել է առևտրային հաշվեկշռի փաստացի պակասուրդի կեսը (2001 թ.՝ ՀՆԱ 12.5%-ը, իսկ 2002 թ.՝ 10%-ը)⁹:

Ամփոփելով նշված երկու մոդելների արդյունքները՝ հեղինակները եզրակացրել են, որ շրջափակումը վնասում է Հայաստանի տնտեսությանը, կրճատում է արտաքին առևտուրն ու տնտեսական աճը, շրջափակման հետևանքով թերարտահանումը բավական մեծ տոկոս է կազմում՝ ՀՆԱ 10–13%-ը, շրջափակման բացասական ազդեցությունն աստիճանաբար թուլանում է մասնավոր հատվածի շնորհիվ:

Աշխարհագրական դիրքն ու ազատ առևտրային քաղաքականությունը նորդասական տնտեսագետների կողմից նշվում են որպես աճի առաջնային որոշիչներ (դետերմինանտ), այդուհանդերձ, այս դրույթը կարելի է վիճարկել՝ նշելով, որ պատշաճորեն գործող ինստիտուտներն օրենքի գերակայության պայմաններում կարող են կայուն զարգացման նախապայման դառնալ¹⁰: Համաձայն վերջին շրջանի հետազոտությունների՝ օրենքի գերակայությունն իրականում կարող է ավելի մեծ ազդեցություն ունենալ տնտեսական աճի վրա, քան աշխարհագրական դիրքը կամ տնտեսության բացության աստիճանը: Հայաստանի աշխարհաքաղաքական իրավիճակն այնպիսին է, որ շրջափակումն էական ազդեցություն ունի տնտեսության վրա, այնուամենայ-

⁸ Տե՛ս **Դ. Բաբայան**, Մաքսային գործի կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում, Տնտ. գիտ. թեկ. գիտ. աստիճանի հայցման ատենախոսություն, Եր., 2009, էջ 106–107:

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 107–108:

¹⁰ Տե՛ս **Մ. Նիկոսյան**, Ինտեգրումը համաշխարհային տնտեսությանը օրենքի գերակայության միջոցով, «Տնտեսական քաղաքականություն և աղբատություն», N 8, 2004, էջ 18–20, <http://www.edrc.am>

նիվ, օրենքի գերակայության անհրաժեշտության դրույթն անժխտելի է նաև մեր երկրի պարագայում: Հայաստանում տնտեսական աճի հիմք կարող է լինել երկրում ազատական օրենքների գերակայության շարունակական զարգացմանն ուղղված քաղաքականության իրականացումը: Օրենքների գերակայությունն ավելի կարևոր է, քան լոկ իրավական դաշտի բարեփոխումը: Ղա ենթադրում է ինչպես օրենքների, այնպես էլ դրանց կիրառման համար անհրաժեշտ ինստիտուտների առկայություն: Կարևոր է նաև օրենքների ներդաշնակեցումը միջազգային չափորոշիչներին՝ հատկապես արտաքին առևտրային գործունեության շրջանակներում:

Այսպիսով՝ սահմանափակ ներքին շուկայի պայմաններում տնտեսությունն իր խնդիրները լուծելիս պետք է հիմնականում կողմնորոշվի դեպի արտաքին շուկաներ՝ սեփական արտադրանքի համար կայուն և որոշակի տեղ գրավելու ակնկալիքով: Միջազգային տնտեսական սուր մրցակցության մթնոլորտում կազմակերպությունների համար չափազանց դժվար է լուծել արտաքին շուկաներ ներխուժելու և այնտեղ հաստատվելու գերխնդիրը: Կարևոր է գործնական աջակցությունը պետական կառավարման մարմինների, ինչպես նաև համապատասխան պետական և ոչ պետական ենթակառուցվածքների կողմից: Արտահանման խթանման և խրախուսման հիմնական ուղղությունները պետք է լինեն ազատ առևտրային հարաբերությունների զարգացումը, արտահանումն արգելակող գործոնների վերացումը, արտահանման խթանման ենթակառուցվածքների ձևավորումը, տեղեկատվական համակարգերի ներդրումը, տեղեկատվական ծառայությունների մատուցումը, տեխնիկական օգնության տրամադրումը, խորհրդատվական ծառայությունների մատուցումը, արտերկրում ՀՀ առևտրական ներկայացուցչությունների ձևավորումը և արդյունավետ գործունեության ապահովումը: Սակայն վերջին տարիներին արտաքին առևտրաշրջանառությունը թե՛ ներմուծման և թե՛ արտահանման առումներով սկսել է աճել (աղյուսակ 2):

Արտաքին հատվածի զարգացումների ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա, ինչպես նաև դրա կառուցվածքի շարունակական որակական փոփոխություններն ու տարածաշրջանային համագործակցության ձևաչափերը նպաստում են ՀՀ միասնացման գործընթացների խորացմանը: Մասնավորապես՝ նշված զարգացումները հիմնականում պայմանավորված կլինեն Մաքսային միությանը (Ռուսաստան-Բելառուս-Ղազախստան) անդամակցելու Հայաստանի Հանրապետության որոշման իրականացման գործընթացներով: Ղառնալով նշված միության անդամ՝ տեղական արտադրողների համար առավել նպաստավոր պայմաններ կստեղծվեն ավելի քան 170 մլն շրջանառությամբ սպառողական շուկա դյուրին մուտք գործելու համար: Հաշվի առնելով այս շուկայում ապրանքների և ծառայությունների նկատմամբ որակի չափանիշները՝ արդեն կարճաժամկետ հատվածում հնարավոր կլինի արձանագրել մի շարք ապրանքային շուկաներում հայկական արտադրանքի մրցունակ և կայուն դիրքավորումը: Մյուս կողմից՝ Մաքսային միությանն անդամակցությունը հնարավորություն կտա նաև էներգակիրներ ներմուծելու առավել ցածր գներով, ինչը էական խթան կլինի մրցունակ առաջարկ ձևավորելու տեսանկյունից: Ընդ որում, ակնկալվում է, որ միասնացման գործընթացը բավականին սահուն և արագ կընթանա, քանի որ պատմական, լեզվական, մշակութային և վարքագծային տեսանկյուններից միության երկրները ընդգծված ընդհանրություններ ունեն Հայաստանի հետ: Միջնաժամկետ և եր-

կարածամկետ հատվածում արդեն Հայաստանը առավել ընդլայնված արտաքին առևտրատնտեսական գործունեություն ծավալելու իրական հնարավորություն է ստանալու: Մի կողմից՝ Եվրոմիության «GSP+» արտոնյալ առևտրային ռեժիմից օգտվելու հնարավորության հանգամանքը, իսկ մյուս կողմից՝ Մաքսային միությանն անդամակցությամբ պայմանավորված առավելությունները ԵՄ–ՄՄ առևտրատնտեսական հոսքերի յուրատեսակ հանգույց դառնալու լուրջ նախադրյալներ կարող են ստեղծել¹¹: Այս համատեքստում կանխատեսվում է արտահանման՝ ներմուծման նկատմամբ հարաբերականորեն ավելի արագ աճ, մասնավորապես՝ արտահանման ուղղվածություն ունեցող արդյունաբերական թողարկման ծավալների էական աճով պայմանավորված: Այս դեպքում ներմուծման նկատմամբ պահանջարկի ավելացումը հիմնականում կհանընկնի ՀՆԱ աճի տեմպերին: Նշված զարգացումների ներքո առաջիկա տարիներին ապրանքների և ծառայությունների հաշվեկշռի բացասական մնացորդը ՀՆԱ-ի նկատմամբ աստիճանաբար կնվազի՝ 2012 թվականին արձանագրված 24.8%-ի փոխարեն 2025-ին կազմելով շուրջ 4.5%՝ արտացոլելով տնտեսության ավելի արտադրողական ճյուղերի, հետևաբար՝ մրցունակ ապրանքների և ծառայությունների արտահանման աճի բարձր տեմպերի ազդեցությունը: Կանխատեսվում է, որ ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցությունը կունենա գրեթե նույն վարքագիծը. մինչև 2025 թ. ընթացիկ հաշվեկշիռն աստիճանաբար կբարելավվի և ծրագրվող ժամանակահատվածի վերջում կկազմի ՀՆԱ շուրջ 3.8%-ը¹²: Այս զարգացումները համահունչ կլինեն ներդրումների համեմատությամբ խնայողությունների ավելի բարձր մակարդակի ձևավորմանը և ՀՆԱ նկատմամբ արտաքին պարտքի նվազման միտումներին:

Այսպիսով՝ ռազմավարական պլանավորման մոդելի ներդրման տնտեսական հիմնախնդիրների լուծումը հնարավորություն կտա դիտարկելու հանրապետության տնտեսության զարգացման ընթացքը նոր ուղղությամբ՝ «բացահայտված համեմատական առավելությունների» համատեքստում:

¹¹ Տե՛ս ՀՀ 2014-2025 թթ. ռազմավարական զարգացման ծրագիրը: ՀՀ Կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442 - Ն որոշում, էջ 24–25:

¹² Տե՛ս նույն տեղը:

НАРИНЕ КАБАКУЛАКЯН

*Аспирант Экономического института
им. М. Котаяна НАН РА,
главный специалист отдела международных отношений
Министерства охраны природы РА*

Проблемы внешней торговли в процессе стратегического планирования.– Эффективность стратегического планирования и пути его повышения обоснованы анализом экспортных сделок в структуре внешней торговли.

В этой связи в данной статье представлены различные зарубежные модели и подходы, которые основаны на увеличении объема экспорта, в результате которого необходимо выявить приоритетные сферы текущего цикла развития экономики РА, а также „выявлены сравнительные преимущества”, применяя современные инструменты стратегического планирования.

NARINE KABAKULAKYAN

*Post-graduate at the Institute of Economics
Named after M. Kotanyan at NA of Sciences of the RA,
Chief Specialist of International Relations Division
at the Ministry of Nature Protection of the RA*

Challenges of Foreign Trade in the Process of Strategic Planning.– Strategic planning and its ways of increasing the efficiency of foreign trade are grounded by the analysis of transactions of export operations. Therefore, in this article various models and approaches based on the volumetric expansion of the export economy were presented . As a result, the current stage of economic development of Armenia in the priority areas, as well as „revealed comparative advantage" using modern tools of strategic planning should be identified.